ԵՐՋԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐՑԸ ՈՐՊԵՍ ՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆ-ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գարեգին Նժդեհը, լինելով ճարտասանութեան մեծավարպետ, իր երկերում խօսքը ներգործուն ու համոզիչ դարձնելու նպատակով մշտապէս դիմում է ոճական պատկերաւոր եւ ճարտասանական տպաւորիչ միջոցների: Սոյն յօդուածում քննութեան կառնուի ճարտասանական հնարներից մեկը՝ հարցը:

Հարցերի ծաւալն ու յաճախականութիւնը: Ուրեմն նախ՝ ինչ նշանակութիւն ունեն շարադրանքում հարցերը, որոնց մեծագոյն մասը, ինչպէս կերեւայ յետագայ մէջբերումներից, հռետորական բնոյթի են: Հարց տալու միջոցով հեղինակը պարզաբանում է ինչ-ինչ խնդիրներ, դրոյթներ, հարցադրումներ, հանգամանքներ կամ պահանջում դրանց պարզաբանումը՝ միաժամանակ արտայայտելով սեփական դրական կամ բացասական վերաբերմունքը: Հարցի ձեւով ներկայացնելով ասելիքը՝ Նժդեհ-ճարտարուեստագէտը ձգտում է, որ ընթերցողը սեւեռուի դրա վրայ, համակուի դրա բովանդակութեամբ, կռահի կամ մտովի փնտրի պատասխանը: Այս ամէնը՝ յուզախառն, ըստ ասելիքի՝ երբեմն հնչեցնելով հաստատակամութիւն ու հաւատ, երբեմն զայրոյթ, ցաւ կամ վիշտ, տարակուսանք, երկընտրանք, նախատինք...

Սակայն առայժմ կանգ առնենք այս ճարտասանական միջոցի արտաքին կողմերի վրայ:

Ի՞նչ չափի են լինում հարցերը, ինչպիսի խտութեամբ: Նախ հարցը կարող է արտայայտուած լինել մեկ բառով, ինչպէս յետեւեալ մէջբերումներում. «**Զիջո՞ւմ** - հերոսի համար չէ դա»[1]: «Հարուածելուց առաջ ողջունել իր հակառակորդին - հնում այսպէս էին վարւում ասպետոգի կռուողները: **Իսկ այսօ՞ր**...» (Հ, էջ 392), «**Ազատութի՞ւն** - այո, երբ... ազատօրէն գործելու կարելիութիւն կայ: **Իրաւո՞ւնք** - միայն սեփական հայրենիքում... **Երջանկութի՞ւն** - հայրե-

1 **Գ. Նժդեհ,** *Հատընտիր*, Երեւան, 2006 թ., էջ 655: Սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում (Հ, էջ):

նազուրկներիս համար խաբուսիկ են բոլոր տեսակի երջանկութիւնները»[2]: Անշուշտ, ստեղծագործողը կարող է ընդգծուած բառերում հանել հարցական նշանն ու յուզականութիւնը պահպանելու համար փոխարինել, ասենք, բացականչական նշանով, կամ կախման կետերով, եւ կամ դնել վերջակէտ: Ի դէպ, այս կերպ գրուած դրուագներ էլ կան: Յիշատակենք վերջին եղանակով մի նմուշ. «Սակայն **այդպէ՞ս է** հասկացել մեր ժողովուրդը. ո՛չ, դժբախտաբար: **Հետեւանքը**: Մեր նկուն ու ողբալի վիճակը: **Պատճառը**: Կոյր եւ բարբարոս կուսակցամոլութիւնը...» (Հ, էջ 37): Բայց հարցը, մասնաւորապէս՝ հռետորական հարցը, Նժդեհի ամենասիրած ճարտասանական միջոցներից է, որին էլ տալիս է նախապատութիւնը յիշեալ հնարաւորութիւնների ընտրութեան դէպքում: Իսկ հարցի կամ հռետորական հարցի դիմելու դէպքերը բազմաթիւ են ու բազմաթիւ:

Աւելի մեծ ծաւալի հարցերի մի ուրիշ մաս բաղկացած են բառակապակցութիւններից, որոնք յետագայ շարադրանքում շատ-շատ են հանդիպելու, իսկ մի երրորդ մաս՝ ամբողջական նախադասութիւններից: Ինչպէս. «**Դե՞մ ես վերանորոգմանը -** դեմ ես կյանքին» (ՌԽՄ): «**Մոռացա՞ւ իր պատմութիւնը**, ասել է՝ անխրատ է ժողովուրդը եւ պատժի է արժանի» (Հ, էջ 457), «**Զո՞ւրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանութեան ընդունակութիւնից** - նշանակում է նա զուրկ է ամէն մի առաքինութիւնից, զուրկ՝գոյութեան բարոյական իրաւունքից» (Հ, էջ 64), «...մէնակութեան սարսափը: **Համակվե՞լ է մի ժողովուրդ այս սարսափով**-պարտուած է, կորած» (Հ, էջ 62): «**Չկա՞յ վստահութիւն** - բարոյապէս անդամալոյծ է բանակը: **Պակասո՞ւմ է հավատը**՝ կենդանի դիակ է բանակը»[3]:

Այժմ Գ. Նժդեհի ստեղծագործութիւններում քննուող սոյն ճարտասանական միջոցի կիրառութեան մի առանձնայատկութեան՝ հարցերի խտութեան մասին: Զարմանք է յարուցում, թէ որքա՜ն ու որքա՜ն յաճախ է նա դիմում հարցախմբերի. ըստ որում, հարցերն անմիջականօրէն յաջորդում են միմեանց, նաեւ նոյն նախադասութեան մէջ. ասելիքը կառուցում է հարցական նշանների հիմքի վրայ: Բերենք օրինակներ. «Պիտ ապրի՛ եւ հայ ժողովուրդը: Պիտ ապրի՛, որովհետեւ այդպէ՞ս է ուզում ինքը: Բայց **ի՞նչպէս, ինչի՞ շնորհիւ, ի՞նչ տվեալներով, գրաւակա՞նը**» (Հ, էջ 26), «Կա՛յ մի պատուհասող ոյժ, մի ձեռք, որ դատում է մեզ, պատժում ամէն օր, ժամ, վայրկեան: **Ի՞նչ է նշանակում սա**: **Ո՞վ է, ի՞նչ է այդ խորհրդաւոր ոյժը**: - Դա մեր խիղճն է...» (Հ, էջ 93-94): Ահա

2 «Ռազմիկ» օրաթերթ, *Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ*, 1943 թ., թթ. 169-178: Այսուհետեւ սոյն աշխատութեանը վերաբերուող յղումները կտրուեն յետագայ շարադրանքում (ՌԽՄ) հապաւման տեսքով:

3 «Հայրենիք» ամսագիր, *Ազատ Միտք*, թիւ 12 (հոկտեմբեր), 1925 թ.: Այսուհետեւ սոյն հրապարակման վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում (ԱՄ) հապաւման տեսքով:

մի հատուած «Պատմութեան դատաստանը» յօդուածից: Այստէղ փաստերի թուարկում է, որ հնարաւոր էր կատարել հաւաստման տարածուած եղանակով: Իրար է յաջորդում եօթ հարց՝ ներկայացնելով փաստերը՝ ասես դիմելով դիմացինին ու պատասխան պահանջելով. «...«պրոլետարական դիկտատուրա»-ի դեռ առաջին տասնամեակում Ռուսաստանում կային 25 անգամ աւելի բանտեր, քան գոյութիւն ունէին Ցարի օրով: Հապա կոնցենտրացիոն **լագերնե՞րը**... արհեստական **սովե՞րը**, Չեկայի կողմից «բեմադրուած **ապստամբութիւննե՞ր**»-**ը**, զանգուածային **ջարդե՞րը**, կղերականութեան **գողգոթա՞ն**, սպայութեան **ոչնչացո՞ւմը**... մութ... **կատակոմբնե՞րը**, որոնց մասին դեռ ոչինչ գիտէ արտաքին աշխարհը» (Հ, էջ 622):

Շատ աւելին. որոշ ստեղծագործութիւնների ամբողջ հատուածներ, որոշ յօդուածների գրէթէ կեսը շարադրուած է հարցախմբերի հիման վրայ: Ըստ որում, արծածւում են հայ ժողովրդի համար վճռականօրէն կարեւոր՝ գոյութեան, անկախութեան, բարոյական վերանորոգման, պատմութիւնն ու լեզուն չմոռանալու, ինքնաքննադատութեան ունակութեան ու նման գաղափարներ: Ահա «Օրերի օրը» համարեա չորս էջանոց յօդուածը, որի մէջ Մայիսի 28-ը պաշտամունքի օր է հռչակւում: Այստեղ միմեանց են յաջորդում քսանի չափ հարցեր. իւրաքանչիւրը ազգային մի խոտելի կողմ է վեր հանում, կողմեր, որոնց գոյութեան համար ընդունուած է օտարին մեղադրել: Մոռացուել է մայիսի 28-ը, հայրենապաշտ չենք, դատապարտել ենք մեզ թուլութեան, ազատ երկրներում հայը կամաւոր թրքախօս է, մեր կեանքում մտաբարոյական անիշխանութիւն է. «**Ո՞վ** է ստիպում մեզ չլինել հայրենապաշտ», «**Ո՞վ** կարող է ինքնանուաստացումի զոհ դարձնել մեզ», «**Ո՞վ** եւ **ի՞նչը** կարող է արգիլել... օգտակար լինել Հայրենիքիս»: Կամ. «**Օտա՞րն** է մեղաւոր, երբ...հայութեան մի մասը... կը շարունակէ գործածել... շնական ժողովրդի լեզուն», «**Օտա՞րն** է մեղաւոր, որ կան հայեր, որոնց կողմից հնագոյն ժողովդի անդամ լինելը չէ գիտակցւում, որպէս գերագոյն երջանկութիւն»: Հետեւում է վերջին ամփոփիչ հարցը՝ «**Օտա՞րն է մեղաւոր** այդ բոլորի համար... ո՛չ, ո՛չ...»: Յօդուածը տպագրուած է 1926թ. «Արաքս» պարբերականի 99 համարում: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ այսքան շատ լինելով հանդերձ, հարցերը մերվում են նիւթի բովանդակութեանը. տպաւորութիւն է առաջանում, թէ շարադրանքը հենց այդպիսին էլ պիտի լիներ, այդ կերպ են ընթերցողի մէջ բարձրանում համապատասխան զգացմունքներ, ուրեմն նաեւ՝ համապատասխան եզրահանգումներ ու մղում ի գործ:

«Տարածուող Անին» երկու էջի չափ յօդուածում իրար են յաջորդում դարձեալ քսանի չափ հարցեր: Գաղթ, նիւթական անմխիթար վիճակ, ուծացում, երկրաշարժ, այլեւայլ վտանգներ, տառապանք. հարցերը գալիս են խորհել

տալու՝ *հայ մա՞րդն է* աւելի ձգտում օգնելու իր ազգակիցներին, թէ մահը, *հայն արժանի՞ է* անկախ հայրենիք ունենալու, *տառապանքը ազնուացնո՞ւմ է* մեր ժողովրդին...: Խօսքը դարձեալ 1926 թ. օրերի մասին է, իսկ յօդուածը տպագրուած է նոյն «Արաքս» թերթի թիւ 233-ում:

«Մեր յեղափոխութեան արարիչը» երեք էջից էլ պակաս յօդուածում՝ տպագրուած Պլովդիւում «Հայաստան» պարբերականի 1924 թ. թիւ 29-ում, շարադրուած է մի մեծ հարցախումբ: Այն հանգամանալից, բայց յուզականօրէն պարզաբանում է Նժդեհի գաղափարախօսութեան մի ամբողջ ուղղուածութիւն: Մի ժողովուրդ այլեւս տառապանքներ չի կրի ուրիշներից, նրան կօգնեն ու կդաշնակցեն, եթե աւելի ու աւելի ուժեղ լինի, ամէն ինչի հանցանքը նրանն է, ով թոյլ է: Բայց մէջբերենք այդ հատուածը. «...Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավառ խաչեցեալի... Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր կը պատասխանէր. - **Ծարա՞ւ ես**, արբ արցունքդ ... - **Կոտորո՞ւմ ես, ջրի չա՞փ էլ արժէք չունի արիւնդ**՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես... - **Կողոպտո՞ւմ ես, տէր չե՞ս վաստակիդ**՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես... - **Շղթաների մէ՞ջ կը ծնին, կ՚ապրեն, կը մեռնեն զաւակներդ**՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես... - **Կա՞խ է գլուխդ, խոնա՞րհ է ճակատդ, բռնութեան լծի տակ երկտակուա՞ծ է մէջքդ, պատուիդ տէրը չե՞ս, ցեղիդ սրբազան լեզուէն օգտուելու իրաւունքն իսկ չունե՞ս, վաղո՞ւց է ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր ղօղանջը չես լսում, առանց իտէալի եւ վեհութեան կը սողաս միայն -ստրո՞ւկ ես**, դու ես մեղաւոր, դու. **ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու** ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: **Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է... - Ուզում ես վերջ տալ գերմարդկային տառապանքի՞դ**, որի Շէյքսպիրը դեռ չէ յայտնուել: **Ուզում ես վերջ տալ գողգոթայի՞դ**, որի վրայ, որպէս յոյսի ժողովուրդ, կը մեռնես ամէն օր եւ չես մեռնի: **Ուզում ես փրկուի՞լ**. - եղիր ոյժեղ, քանզի թոյլերը բարեկամ չունեն աշխարհում... Ցոյց տուր... առաջինը, որ գիտես մեռնել գիտակցօրէն, երկրորդը՝ որ գիտես մեռցնել: **Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինութիւնները**... փրկուած ես»:

Դժուար է, չասելու համար անհնարին է, հայ գրականութեան մէջ մատնացոյց անել մեկ այլ գրչի մարդու, որն այդպէս արուեստօրէն եւ այդպիսի խտութիւն ունեցող խմբերով դիմեր հարցերի ճարտասանական միջոցին:

Որոշակի հարցախմբերում իւրաքանչիւր հարց՝ դրան յաջորդող յետեւութիւնը հնարաւոր է արտայայտել շարահիւսական մեկ այլ ամբողջական միաւորով, այն է՝ գլխաւոր նախադասութեամբ՝ իր պայմանի երկրորդական նախադասութեամբ, ստորադասուած *եթէ* շաղկապով, կամ նաեւ ժամանա-

կի երկրորդական նախադասութեամբ՝ ստորադասուած *երբ* շաղկապով: Այսինքն՝ տուեալ խօսքային հատուածը հարցական նախադասութիւնների փոխարէն շարադրել պատմողական նախադասութիւններով: Այսպէս. բնութագրելով ժողովրդի առաջնորդին՝ Նժդեհը մերժում է ինչ-ինչ բացասական հատկութիւններ՝ գրելով. «**Եսակա՞ն է**՝ անասնանում են նրա հետ առնչուողները: **Ծո՞յլ է մտաւորապէս**՝ հոգեւոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները: **Անհայրենապա՞շտ է**՝ հակահայրենիք հրէշներ են վխտում նրա շուրջը» (Հ, էջ 179): Այո, հնարաւոր է վերը նշուած կերպով փոխաձեւել հատուածը եւ շարադրել պատմողական նախադասութիւններով խօսքաշարեր: Ի վնաս իմաստային կողմի գուցէ շատ բան չի փոխուի, բայց չի լինի պահանջուող խօսքի ոյժը, ինչի համար էլ հեղինակը նախընտրել է ճարտասանական հարցերի միջոցը: Բերենք մեկ այլ հատուած: Այստեղ վերլուծւում է կռուի մարտավարութիւնը. «Որեւէ համառ կէտի վրայ ուժաթափել թշնամուն եւ ապա անցնել յարձակողականի... **Ցո՞ւրտ է**, աւելի լաւ, **թո՞յլ է թշնամին** -յարձակուի՛ր: **Անձրեւո՞ւմ է**, աւելի լաւ, **թո՞յլ է թշնամին** -յառաջացի՛ր: **Բո՞ւք է, մառախո՞ւղ** - ուրախացի՛ր, որպէս գայլը, եւ առա՛ջ: Իսկ երբ իջաւ եօթնիցս օրհնուած գիշերը - ցնծա՛, դու արդէն յաղթել ես» [Հ, էջ 46]: *Երբ* կամ *եթէ* շաղկապներով սկսուող նախադասութիւններով շարադրելու փոխարէն հեղինակը նախընտրել է վեց հարց: Եւ կամ. «Դերեր կան, որոնք միջակութիւն չեն վերցնում: **Կա՞յսր ես**՝ եղի՛ր Մարկ Աւրելիոս. **Իմաստասէ՞ր ես**՝ եղի՛ր Պղատոն. **Զորավա՞ր ես**՝ Աւարայրի Վարդա՛ն եղիր» (Հ, էջ 366):

Եւ այսպէս. հարցերը՝ մեծ մասամբ հռետորական, արտայայտւում են մեկական բառով, բառակապակցութեամբ կամ ամբողջական նախադասութեամբ, շատ յաճախ հանդէս են գալիս խմբերով, որպէս ճարտասանական միջոց եւ նախընտրւում են նոյն իմաստը պարունակող պատմողական նախադասութիւններից:

Հարց եւ պատասխան: Ինչպէս միշտ, այժմ էլ տրուող հարցերը կարելի է քննութեան առնել՝ կապուած այն հանգամանքի հետ, թէ ինչ պատասխաններ են ակնկալւում: Ըստ այսմ, լինում են յետեւեալ խօսքային իրաւիճակները:

ա. Հարցեր, որոնց պատասխանները չեն ակնկալւում կամ ինքնին հասկանալի են: Այսպիսի հռետորական հարցերով Նժդեհը հասարակութեան ուշադրութիւնն է հրաւիրում կյանքի ամենատարբեր կողմերին՝ պատմական, քաղաքական, բարոյադաստիարակչական, ցեղային, ռազմավարական, հասարակական, նոյնիսկ օրուա կենսակերպին վերաբերող, միով բանիւ, իր գաղափարախօսութեան դրոյթների վրայ: Սկսենք հեղինակի հոգու ցաւից, որ համընդհանուր հայութեան ցաւն է: Ահա հարցը. «...իր անօ-

րինական ցաւերէն եւ ամօթանքէն լեզու ելած հայաստանցին իր հարցումը կ'ուղղէր ճակատագրին. **ինչո՞ւ այսպէս, եւ մինչեւ ե՞րբ**» (Հ, էջ 171): Այլ է յաջորդ հարցը, որ մատնանշում է հայ ժողովրդի փրկութեան ուղին. «Ա՜հ, Ցեղայայտնութեան երանելի օր, **պիտի ուշանա՞ս**, **արդեօ՞ք հեռո՞ւ ես**» (Հ, էջ 184): Այլ թեմաներ: «Բանտարկեալները» յօդուածում ուշադրութեան առարկան ազատազրկուածներն են. «Բայց, աւա՛ղ, այդ կարմիր բանտարկեալների տասնեակից միայն մէկն է ազատւում, **իսկ միւսնե՞րը**...» (Հ, էջ 436): Այդ մտահոգութեամբ, բանտից Սիմոն Վրացեանին գրած նամակում յուզախռով բացականչում է. «Սիրելի Սիմոն, գիտեմ, տեսնելով ձեռագիրս՝ պիտի խռովես հոգով: Նժդեհը **կենդանի՞**, **հաւատա՞լ**» (Հ, էջ 699):

Հռետորական հարցերը նոյնպէս լինում են փնջերով, համաձայն հեղինակի սիրած գրելաոճի՝ այդ կերպ շիկացնելով խօսքային իրավիճակը. «**Ո՞ր հայ գրողը**, **ո՞ր ճշմարիտ հայրենասէրը,** եւ մասնաւորապէս, **ո՞ր ռազմիկը** Հայաստանին սպառնացող վտանգի վայրկեաններին չէ ոգեկոչել Հայրենիքի համար մեռնել՝ ուխտած մամիկոնեանների օրինակը: **Ե՞րբ է** հայ սուրը գործել առանց Վարդանի եւ գրիչը շարժուել՝ առանց Մեսրոպի անունը տալու: **Դեռ երէկ չէ՞ր**, որ հայ գրողներէն ամենացեղաշունչը – Ահարոնեանը... Ղարաքիլիսը անուանեց «Նոր Աւարայր»: Եւ **ի՞նչ է Աւարայրը**... եթէ ոչ տարօնական ոգու մէկ գործը», - հնչում է «Ինչո՞ւ տարօնականութիւն» յօդուածում (Հ, էջ 540-541): Նոյն յօդուածի առաջին երկու մասում, յատկապէս երկրորդում, այսպիսի հարցափնջեր են: Մի փունջ էլ երկրորդ մասից. «**Ի՞նչ**, Հերոսականութեան... Մամիկոնեանի բարոյականի **կարիք չէ՞ զգում** օրւայ հայութիւնը: Այլեւս «արիաբար առաջ անցնող»ներ **պետք չէ՞ն**. Հապա վտանգւած **Հայաստա՞նը**: **Զարմանալի՞ է**, որ հայ զինուորը... Մամիկոնեաների ոգուց... է խօսում: **Այդ ո՞ր օրւանից**... հերոսապաշտութեան քարոզչութիւնը... վտանգաւոր հերետիկոսութիւն համարւեց» (Հ, էջ 547-548):

Ինչպէս յայտնի է, որոշակի հռետորական հարցեր, արտայայտած բովանդակութեամբ պայմանաւորուած, ենթադրում են պատասխաններ, ու թէեւ վերջինները չեն շարադրւում, միեւնոյնն է, ընթերցողը կամ ունկնդիրը ներքուստ զգում է ակնկալուող պատասխանը: Ըստ որում, եթէ հարցը բացասական երանգով է ձեւակերպուած, եւ գործածուած բայերն էլ ժխտական խոնարհման են, պատասխանը սպասւում է դրական՝ հաստատական: Ահա այդպիսի հարցերից մի քանիսը. «Միթէ եօթնիցս **զզուելի չէ՞** հայրենիքի զգացումէն ու պաշտամունքէն զուրկ անհատը» [Հ, էջ 471], - իր բաց նամակում հարցնում է Նժդեհը Մայքլ Արլէնին. «Անարի լինել եւ անկախ հայրենիք երազել - **ծիծաղելի չէ՞** դա: **Անմտութիւն չէ՞** եւ ոչխար լինել եւ գանգատւել գայլերից» (Հ, էջ 109), «Ժամանակը չէ՞ խոստովանել... որ հայն իր պատմութիւնից

բնաւ չի սովորում» (Հ, էջ 586): Ակնկալւում է, որ այս հարցերով հեղինակը ցանկացել է ասել համապատասխանաբար՝ *զգուելի է, ծիծաղելի է, անմտութիւն է, ժամանակն է*: Եւ ընդհակառակը, եթէ հարցը ձեւակերպուած է դրական երանգով եւ գործածուած բայերն էլ դրական խոնարհման են, պատասխանն ակնկալւում է բացասական. «...մեր ժողովուրդը **գիտակցո՞ւմ է**, թէ երբեք իր գլխովին կորչելու վտանգն այնքան մեծ չի եղել, ինչպէս այսօր: **Գիտակցո՞ւմ է**, թէ անցեալում իր վիճակը... նւազ մտահոգիչ է եղել, քան այսօր» (Հ, էջ 26), «**Ցեղաճանա՞չ** են օրւայ մեր ուսուցիչները» (ՌԽՄ), «Իսկ արտաքին **պայմանները՞ը**, **Եւրոպա՞ն**, որը Հայկական հարցը ծառայեցրեց իբրեւ առիթ՝ Թուրքիոյ ներքին գործերին միջամտելու եւ սակարկելու նրա հետ - **ճանաչո՞ւմ էին** Եւրոպան» (հայ մտաւորականները /հեղ. հեղ./) (Հ, էջ 631-632): Ակնկալուող պատասխաններն են՝ *չի գիտակցում, ցեղաճանաչ չեն, չէին ճանաչում:*

բ. Հարց, որին յաջորդում է պատասխան: Հարցերի միջոցով շարադրելով իր գաղափարները՝ հեղինակը, բացատրութիւնների անհրաժեշտութեամբ պայմանաւորուած, այլ դէպքերում անմիջապէս տալիս է նաեւ իր պատասխանը: Իր իսկ հարցին, թէ այսօր կամ վաղը *հնարաւո՞ր է* համաշխարհային եղբայրութիւն, տրւում է հետեւեալ պատասխանը. «Ո՛չ, ո՛չ ի հարկէ» (Հ, էջ 455): Ուրեմն՝ «**Ո՞ւր է ելքը**: **Ո՞վ կը փրկէ** հայ հոգին ստոյգ մահից...»: «Ցեղի յաւիտենական զէնքը» յօդուածում յետեւում է մի պատասխան, որը նրա գաղափարախօսութեան հիմնաքարերից մեկն է. «- Ցե՛ղը, միա՛յն ցեղը» (Հ, էջ 535): Այդ գործում դիմելով հայ երիտասարդութեանը, հարցնում է, թէ նա դիւցազնական սերունդ **պիտի դառնա՞յ** եւ **պիտի կարողանա՞յ** փրկել մեր ժողովրդի ապագան. Վստահութիւն ներշնչելով՝ պատասխանում է. «Ցանկութեան դեպքում՝ ԱՅՈ՛» (Հ, էջ 142):

Մտքի կարեւորութիւնն ընդգծելու համար տալիս է մի փունջ հարցեր՝ մեկ ընդհանուր պատասխանով՝ գաղափարական հիմնաքարերից եւս մէկով: Յաջորդող հարցախումբը ընդգծում է յետեւեալ մտքի կարեւորութիւնը: «**Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովրդի** - ահա Հայ եկեղեցւոյ նոր հաւատամքը: **Չընդունե՞ց** այս ճշմարտութիւնը, **չքարոզե՞ց**, **չտարածե՞ց** ամէն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով **չնպաստե՞ց** մեր ինքնապաշտպանութեան գործին - **կործանւած է դա**» (Հ, էջ 66):

Երբ հարցը պահանջում է հանգամանալից պատասխան, տրւում են բացատրութիւններ՝ արդէն ո՛չ մէկ բառով կամ նախադասութեամբ: «*Ողիների* պայքարը հայրերի դէմ» գրքում հեղինակը հարցնում է մարդկային տառապանքի պատճառը, որին յաջորդում է մանրամասն պատասխան. «-**Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս**: **Ինչո՞ւ կը տառապի** մարդկային ցեղը: - **Որովհետեւ միամիտ**

մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտռեց եւ կը փնտռի երջանկութիւնը: **Որովհետեւ նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը**...» (Հ, էջ 93):

Այլ դէպքերում, հարցախումբն առաջ քաշելով, Նժդեհը իւրաքանչիւր հարցում մատնանշում է հասարակական կեանքի մի կողմը եւ պատասխանելով հարցերին առանձին-առանձին, վեր հանելով հետեւանքները՝ իր ժխտողական վերաբերմունքն է արտայայտում իրականութեան պատկերի վերաբերեալ: Այսպէս է «Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ» աշխատութեան «Ընտրանի» ենթագլխում, որտեղ բնորոշում է ժողովրդի ընտրանուն եւ պարզաբանում նրա դերակատարութիւնը, նրա վարքի հետեւանքները. «**Կրօնապէս պա՞ղ է եկեղեցականը՝ հակակրօն է ժողովուրդը**: **Հոգեպէս Էսնա՞ֆ է ուսուցիչը, այլեւս կարիք չկա՛յ աւելի մեծ դժբախտութիւն բաղձալ նրա ազգին**: **Յաւիտենականի շունչից զո՞ւրկ է գրողը՝ նա անխուսափելիօրէն պիտի դառնայ ստորնութեան քարոզիչը**: **Պարտուողակա՞ն է զինուորը՝ այլեւս նա հեռացած է իր...հայրենիքից...Շահասէ՞ր է ազգային գործիչը՝ նուազ ազգասիրութիւն ու նուիրում փնտռէ՛ք ազգի լայն խաւերի մէջ**: **...ընտրանին... Շեղուե՞ց իր կոչումէն - ժողովրդի անկումը դառնում է անխուսափելի**» (Հ, էջ 650): «Ինչո՞ւ տարօնականութիւն». (Հ, էջ 537-552) սա հարց-վերնագիր է: Պատասխանը մի ամբողջ յօդուած է, որի էութիւնը յետեւեալն է: Տարօն աշխարհը Հայաստանի սիրտն է, այստեղից է ծագել մեր մշակոյթի հիմքերի հիմքը՝ հայոց այբուբենը, հայրենիքին ու հաւատին անձնուրաց նուիրուելու «Վարդանանց ուխտը»: Մամիկոնեան տոհմին յետեւելով՝ ցեղի արթնութեամբ կփրկուի հայ ժողովուրդը:

գ. Հարց՝ ի պատասխան հարցին: Տրւում է հարցը: Ենթադրւում են երբեմն այլընտրանք չունեցող կամ հնարաւոր պատասխանները, որոնք թուարկւում են հարցերի տեսքով: Սրանց յետեւում են հեղինակի պատասխանները, բացատրութիւնները: Խօսքային իրավիճակը տրամաբանական զարգացման մէջ է. դիմացինին հեղինակը ոչ մի հնարաւորութիւն չի թողնում: 1921թ. փոխվարչապետ Ա. Հովհաննիսյանը թուրք քոչվորներին է վաճառել Սիսիանի արոտավայրերը: Այս կապակցութեամբ ՀՅԴ Գերագոյն դատական ատեանին ուղղած բացատրագրում Նժդեհը վերլուծում է իրավիճակը. «**Որպէս ի՞նչ էր** հիսուն միլիոն ռուբլի հայկական չեկերով **ծախում** այդ շրջանը: **Ճակա՞տ**: Դա դաւաճանութիւն կլիներ: **Արոտատեղինե՞ր** – այդ դէպքում հարկաւոր էր հարցնել Սիսիանի ժողովրդին, որովհետեւ ամբողջ երեք տարի նա այդ արոտատեղիի, ճակատի համար էր կռուել»[4], «**Ի՞նչը հայերիս դարձրեց յաղթական Սարդարապատում եւ Ղարաքիլիսում**...», - հարցնում է Նժդեհն

4 ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ. 213-230:

իր «Մեռնելու կամք» յօդուածում եւ ապա տալիս հարցեր, որոնք կարող էին միայն անհիմն հիմնաւորումներ մատնանշել, - «...**չգոյ թի՞ւը**, **սպառազինութի՞ւնը**, **կռի հանճարեղ յատակագի՞ծը**», - ապա պատասխանում է, - «վճռապէս ո՛չ, ո՛չ մէկը եւ ո՛չ էլ միւսը, այլ՝ մեր ուխտը, մեր կամքը՝ մեռնե՛լ, բայց թուրքը չտեսնել Էջմիածնում, Երեւանում» (Հ, էջ 558): Հիմնական հարցին ի պատասխան տրուող հարցերով ու վերջիններիս յաջորդող բացատրութիւններով է կատարւում 1921 թ. մայիս-հունիս ամիսներին Լեռնահայաստանում հաստատուած հայկական զօրամասերում տիրող իրավիճակը: Բոլշեւիկները ներում են շնորհել Երեւանից արտասահման հեռացածներին՝ վերադարձի համար ստեղծելով բարենպաստ պայմաններ. «**Ինչպիսի՞ տպաւորութիւն կարող են թողնել** այդ բովանդակութեան **նամակները** մի զօրամասի վրայ, որը բոլշեւիկների հալածանքներից էր փախել Երեւանի շրջանից: **Չէ՞ որ այժմ վերանում են** նրա վերադառնալու երկիւղի բոլոր պատճառները... **Ո՞ւմ համար նա պիտի կռուի**, **Երեւանը գրաւելու համա՞ր**: Առանց կռուի էլ՝ նրան թոյլ են տալիս այնտեղ գնալու: **ՀՀ կառաւարութեա՞ն համար**: Դրա մեծ մասը վաղուց է թողել իրեն եւ օր առաջ անցել Թաւրիզ: **Լեռնահայաստանի՞** համար: Բայց դա իր հայրենիքը չէ, եւ ոչ մի բանով կապուած չէ նրա հետ»[5]: Եւ մի վերջին դէպքում էլ հեղինակի ներկայացրած հարցափնջին եւ ի պատասխան առաջ քաշուած հարցերին պատասխանում է դիմացինը: Եւ որովհետեւ պատասխանը թերի է կամ սխալ, պահանջւում են հեղինակային բացատրութիւններ. «Իսկապէս, **ինչո՞ւ պարտուեց** եւ բարեկամներից լքուեց **հայ ժողովուրդը**: **Ո՞վ է մեղաւոր**, երկրի **աշխարհագրական դի՞րքը**, քրիստոնէական **Եւրոպա՞ն**, մահմեդական **Ասիա՞ն**, **ճակատագի՞րը**: - Բոլորը՝ բացի մեզնից,- այսպէս կը տրամաբանէ մեր անուղղայ քաղքենիամտութիւնը» (Հ, էջ 58):

Եւ այսպիսով, խօսքը շարադրւում է հարցական եղանակով. առաջ են քաշւում հարցեր, որոնք հռետորական են եւ պատասխաններ չեն ակնկալւում կամ հարցեր, որոնց յետեւում են հեղինակի կամ դիմացինի պատասխանները, ինչպէս եւ հարցեր, որոնց ի պատասխան տրւում են այլ հարցեր՝ վեր հանելով հնարաւոր պատասխանները:

Տրամադրութիւններ, հոգեվիճակներ: Նախորդ երկու ենթակէտում շարադրուեց, որ Գ. Նժդեհը հարցախմբերի միջոցով ներկայացնում է գաղափարախօսութեան հիմնադրոյթներ, վերլուծում հասարակական իրավիճակներ, պարզաբանում երեւոյթների, այս կամ այն վարքի պատճառներն ու յետեւանքները: Այդ ամէնի հետ միատեղ նա ներկայացնում է նաեւ տրամադրութիւններ, հոգեվիճակներ՝ անհատի (նաեւ սեփական), հասարակական խաւերի, մամուլի, երիտասարդութեան կամ ողջ հայութեան: Կանգ առնենք

5 ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ. 109-162:

առաւել տարածուած տրամադրութիւնների վրայ առանձին-առանձին: Բաժանումն ըստ ենթակէտերի, այստեղ հարաբերական է, քանի որ տրամադրութիւններն անխառն չեն հանդիպում: Ուստի հընթացս, առիթը ներկայանալիս կանդրադառնանք եւ այլ տրամադրութիւնների, զգացումների, իրավիճակների:

ա. Երկընտրանք-այլընտրանք: Մեծ անհատների երկընտրանքն աղերսւում է հասարակական կեանքի հետ: Նժդեհն, ահա, գնահատում է մի այդպիսի անհատի՝ Աւետիս Ահարոնեանի գործունեութիւնը, դրուատում նրան, որովհետեւ մնաց իր ժողովրդի հետ եւ իր գրականութեամբ ծառայեց ժողովրդին: Ջուգայեռ է անցկացուում Ահարոնեանի եւ Մովսէսի միջեւ. «Մովսէսը երկընտրանքի առջեւ... **Ո՞ւր գնալ**, **դէպի** ժողովուրդը եւ նրա հետ դէպի **Անապա՞տ**, **թէ՞ մնալ** Փարաւոնի անդորրաւէտ ապարանքում» (Հ, էջ 148): «Էջեր իմ օրագրէն» աշխատութեան մէջ երկընտրանք է առաջադրում հայկական թերթերին. «...**կարո՞ղ են** հայրենասիրութիւն դաստիարակել, այդ դէպքում.... յուսալի է մեր ապագան: **Չէ՞ն կարող** - թող դադարեն թուղթ սեւացնելուց» (Հ, էջ 35): Երկընտրանք է առաջարկուում նաեւ հայ երիտասարդութեանը. *պիտի կարողանա՞յ* կենդանի սուր լինել հայրենիքի համար. «*պիտի չկարողանա՞յ,* – ի զո՛ւր է ապրում: «Ցե՜ղ, թէ՞ կուսակցութիւն» երկընտրանքային վերնագիր մի ամբողջ յօդուածի. *ցեղ*՝ բոլոր ժամանակների ու սերունդների հավաքականութեան ընբռնում, որ տանում է հայրենիքը համընդհանուր հաղթանակների եւ՝ *կուսակցութիւն.* ժամանակի իրավիճակով պայմանաւորուած հաւաքականութիւն, որն յետաքրքրուած է խմբակցային շահերով (Հ, էջ 630-633):

բ. Դիմում: Անհատին, հասարակութեան մի հատուածին, երիտասարդութեանը, ժողովրդին ուղղուած հռետորական դիմումներն ուղեկցուում են հարցերով, մեծ մասամբ՝ հռետորական հարցերով: Իսկ դիմումների առիթները բազմազան են՝ դատապարտող, սթափեցնող, յուզառատ, մի բանի վրայ ուշադրութիւն հրաւիրող, պարտաւորեցնող... Անհատներից յիշատակենք երկուսին: Տարբեր նկատառումներով հեղինակը դիմում է անցորդին: *Դաշնակցութեան պանթեոնը* արձակ բանաստեղծութիւնների շարքում նկարագրում է Հրանտի գերեզմանը. « Նա, անցորդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձող պատանին, սիրում էր եւ լեռները... եւ երգն անխօս ոսկեշող աստղերի ...», - ապա դիմում անցորդին, - «**Դու լալի՞ս ես**, անցո՛րդ...» (Հ, էջ 413): «Բանտային գրառումներ» աշխատութեան մէջ հանգիստ հանգչելու համար երազում է, որ Մասիսը, Նեմրութն ու Սիփանը էլի հայինն են... Ապա հռետորական հարցով դիմում է անցորդին, սթափեցնում նրան՝ վերջում դիմելով

հռետորական կոչով. «Անցո՛րդ, ասա՛, **հեռո՞ւ է այդ օրը**: Բաբէ՛, **դու լալի՞ս ես, դու զինաթա՞փ ես**... Ի մա՛ռտ, անցո՛րդ, ի մա՛ռտ...» (Հ, էջ 407):

Պատմական, իրական անձերից, որոնց հռետորական հարցերով դիմել է Նժդեհը, հիշատակենք Գեղեոն Տեր-Մինասեանին: «Իմ պատասխանը» հուշագրութեան ենթագլուխներից մեկը հեռակայ դատ է մի մարդու, որը ժամանակին Լեռնահայաստանում կռուել է Նժդեհի հետ, իսկ արտասահմանում, եկամտաբեր պաշտօն ստանալով բոլշեւիկներից, «Յուշեր անցեալից» յօդուածաշարով հանդէս է եկել իր կեանքը փրկողի անուանարկմամբ: Յամառոտակի մէջբերենք այդ հարցաշարը: «...Գեղէո՛ն...**Չգիտէի՞ր, յիմա՛ր**, որ քո ստութեան ետեւէն ճշմարտութիւնը կը հասնէր կրնկակոխ... **Գոհ չե՞ս**, որ իմ վարած կռիւների շնորհիւ միայն Սիւնիքն այսօր կազմում է մայր երկրի անբաժան մասը: **Չե՞ս ընդունում**, որ հայ բոլշեւիկն իսկ կարող է գարշել ապսպրանքով իմ դէմ թխածդ տողերէն» (Հ, էջ 283):

«Ինչո՞ւ տարօնականութիւն» բացատրական յօդուածը հեռակայ խօսակցութիւն է Նժդեհի եւ «*Նոր օր*» պարբերականի խմբագրակազմի միջեւ: Մի շարք հռետորական հարցերից հետո նա հարցերով դիմում է նաեւ խմբագրութեան անդամներին. «**Չե՞ք լսում** յուսահատ ճիչերը, թէ դժուար է օտարութեան մէջ հայը հայ պահել... **Կ՚ուզէի՞ք**, որ եկող մեծ օրերը իրենց առջեւ գտնէին... անզօր - մի պզտիկ սերունդ» (Հ, էջ 541-542):

1920 թ. սեպտեմբերի 15-ի նախատալից հրամանը թշնամուն յանձնուելու կապակցութեամբ Նժդեհի դիմումներից մէկն է հասարակութեան մի հատուածին՝ ղափանցիներին. «...բայց **գիտե՞ս**, Ղափա՛ն, թէ որքան ուժեղ է նա (թշնամին /հեղ. հեղ./) ատում եւ արհամարհում քեզ... **Գիտակցո՞ւմ ես, չափո՞ւմ** կատարածդ տմարդութեան անչափելի մեծութիւնը» (Հ, էջ 424): 1920 թվականի սեպտեմբերի 17-ի կոչում հանդիմանական, հիշողութիւն արթնացնող հարցերով դիմում է Ղափանի ժողովրդին (Հ, էջ 424-426):

«Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան մէջ, որն ամբողջովին վերցրած, հանդիպում է հեղինակի եւ նոր սերնդի միջեւ, ահա ինչպիսին է դիմումը հայ երիտասարդութեանը. «Հա՛յ երիտասարդութիւն, վաղը, երբ թրքութիւնը փորձեց պղծել Հայրենիքիդ սահմանների սրբութիւնը, **պիտ կարողանա՞ս** աւելի սարսափելի լինել, քան թշնամին: **Պիտ կարողանա՞ս** վագրային կեցուածք ցուցադրել: Պատասխանի՛ր, **պիտ կարողանա՞ս**...» (Հ, էջ 132):

Այս ամէնի հետ մէկտեղ Նժդեհի մշտական խօսակիցը, գրեթէ գրչընկերը, ուղղակի թէ անուղղակի, ընթերցողն է, որի հետ կիսում է իր մտքերը, տրամադրութիւնները, ձգտումները, զգացմունքները՝ դիմելով ամենատարբեր՝ ուշադրութիւն հրաւիրող, պարզաբանող, յիշեցնող, սթափեցնող, ցուցական եւ

այլ կարգի հարցերով: Վերցնենք, թէկուզ, «Բանտային գրառումներ» աշխատութիւնը, որը այլեւայլ բնագաւառների քննութիւն լինելով հանդերձ, զրույց է իր հեռակայ խօսակցի հետ, որին մերթ դիմում է եզակի, մերթ յոգնակի (*գիտե՞ս... գիտե՞ք...*), մերթ՝ *ընթերցող, բարեկամ, անցորդ...*: Ի՞նչ ասել կուզի, այսպիսի գրելաձեւը մտերմիկ է, կապը՝ երկկողմանի:

գ. Տարակուսանք: Որքան տարածուած, որքան շատ են թիւր գաղափարների, ըմբռնումների հարցադրումները, այնքան մեծ է տարակուսանքը, մեծ է հարցախումբը: Իւրաքանչիւր հարց- տարակուսանքի հետ մէկտեղ ժխտումն է թիւր մի հարցադրման: Մի այսպիսի հարցափունջ «Էջեր իմ օրագրէն» աշխատութիւնից՝ տպագրուած 1924 թ., հակադրութիւնն է աշխարհաքաղաքացիութեան, սեփական ազգերի շահերը մարդկութեան շահերին ստորադասելու գաղափարական ըմբռնումների: Մէջբերենք այդ հարցափունջը. «**Մերը պիտի չսիրե՞լ**, որովհետեւ **պէտք է սիրել եւ օտարի՞նը:** Մի **մասը** պիտի **չսիրե՞լ**, որովհետեւ **սիրում ենք ամբողջութի՞ւնը**: **Անհեթեթութիւն չէ՞ դա**: Իսկ եթե բոլորն էլ, ի դժբախտութիւն աշխարհի, դադարէին իրենց ազգը սիրելուց, **կը շահե՞ր մարդկութիւնը**: **Եւ ինչո՞ւ** միայն **մե՛ր ազգը չսիրել, ինչո՞ւ** միայն **մերի՛ն չօգնել, չէ՞ որ դա էլ մի մասն է** կազմում **մարդկային ցեղի**» (Հ, էջ 31): Հիրաւի, ինչո՞ւ մենք՝ հայերս, պիտի լինեինք առաջինը, աւելի ճիշտ՝ միակը, որպէսզի, երբ ուրիշները տարածքներ էին շահում, մենք կորցնեինք յանուն այն գաղափարի, թէ «միեւնոյնն է, շուտով սահմանները վերանալու են»... Մի հարցափունջ էլ 1927 թ. տպագրուած «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութիւնից՝ հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ, որ նոյնքան արդիական է եւ նոյն ուժգնութեամբ հնչում է այսօր՝ գրեթէ 90 տարի անց. «...յաղթականի իրաւունքն է՝ զրկել պարտուածին փոխվրէժի դիմելու, ինձ վնասելու հնարաւորութիւնից: Եթէ դարաւոր թշնամիդ այսպէ՛ս խօսեց քեզ հետ: Եւ **կարիք կա՞յ խօսքի**՝ թրքութիւնը ճանաչելու համար: **Մի՞թէ** խօսուն եւ **հասկանալի չէ** նրա հայադաւ լռութիւնը: **Միջազգային բարոյակա՞նը:** Բայց **այդ երբանի՞ց է**, որ գոյութիւն ունի դա**: Արեւելքի** խուժն ու **ստրո՞ւկը**, հակաբարոյական թուրքն ու **հայ պարտուողակա՞նը** հիմքը պիտի դնեն ցեղամիջեան բարոյականութեան» (Հ, էջ 136): Այժմ էլ նոյն տարակուսանքը, զայրոյթախառն նոյն տարակուսանքն է հնչում ի պատասխան այն տրամադրութիւնների, թէ՝ «Այժմեան թուրքը նոյն թուրքը չէ»:

դ. Զայրոյթ: Գարեգին Նժդեհն արդարացի զայրոյթ ապրելու պատճառներ շատ ունեցաւ: Կուսակիցները (մասնաւորապէս՝ Ռուբէն Տէր-Մինասեանը) դաւեցին նրան եւ խոչընդոտեցին ցեղակրօնութեան շարժմանը, գաղութահայութեան որոշ տարրեր շարունակ զրպարտեցին եւ անուանարկեցին նրան, եղան մարդիկ, ինչպէս նշուեց, (օրինակ Գեղեօն Տէր-Մինասեա-

նը), երախտապարտ լինելու փոխարէն, սեփական շահից ելնելով, թշնամիներ դարձան, պաշտպանեալ Լեռնահայաստանի որոշ գիւղեր, ենթարկվելով քարոզչութեանը, հակառակորդի կողմն անցան, զինուորական նախարարին ուղղուած օգնութեան դիմումներն անպատասխան մնացին, փոխվարչապետ Արշակ Հովհաննիսեանը վնասարար կերպով միջամտում էր ռազմական հարցերին եւ այլն, եւ այլն, եւ այլն ... Այս ամէնը պակաս անհատական եւ շատ աւելի հասարակական, ապա նաեւ պետական նշանակութիւն ունեցող հանգամանքներ էին, ուստի դրանց դէմ պէտք էր պայքարել գրչով՝ հրապարակաւ, եւ Նժդեհի զայրոյթի, նախատինքով ու դառնութեամբ խառն զայրոյթի կայծերը թափւում էին մեղապարտների գլուխներին: Այստեղ մեր խնդիրը նշուած հարաբերութիւնների վերլուծութիւնը չէ, այլ՝ թէ ինչպէս էին հարցերը, մասնաւորապէս հռետորական հարցերը, դառնում զայրոյթ արտայայտելու միջոց: Եւ այս առումով դասական նմուշ է Նժդեհի «Բաց նամակ Մայքլ Արլէնին» հրապարակախօսական յօդուածը: Սկզբից մինչեւ վերջ յօդուածը հնչում է զայրացկոտ, դատապարտող հարցերը յաջորդում են միմեանց: Խնդրի բերումով մեզ առանձնակի կարող է զբաղեցնել նամակի *Զ.* մասը: Այստէղ մե՛րթ անմիջաբար, մե՛րթ փոքր ընդմիջումներով, իրար են յաջորդում քսանի չափ հարցեր: Մայքլ Արլէնը միակ պատմական անձն է, որին միանգամից այսքան շատ եւ ամոթաբեր հարցեր է ուղղում Նժդեհը: Որպէս արդիւնք՝ ընթերցողի առջեւ է կանգնում գրողի ոչ բարոյական մի կերպար, որովհետեւ իւրաքանչիւր յուզախռով հարցական ի ցոյց է դնում միաժամանակ մի յատկանիշ, մի դիմագիծ՝ հայածին, բայց հայատեաց, ցեղի դասալիք, բայց դատաւոր, «գրչի կուրտիզանութեամբ» զբաղվող մէկի: Բայց ահա այդ հարցերը. «**Դուք գիտե՞ք հայ գրողի ճակատագիրը՝**... մեռնել զրկանքների մէջ: **Դուք գիտե՞ք այդ**... **Ի՞նչ, արդա՞ր է**, որ նման մէկը... օտար մամուլի մէջ իր ազգը *կենդանի մեռեալ* հռչակէ: **Դասալիքը դատաւորի դերո՞ւմ**... **Մի՞թէ եօթնիցս զզուելի չէ՞** հայրենիքի զգացումէն ու պաշտամունքէն զուրկ անհատը: ...**Չգիտե՞ք, որ** ... ձեր տողերը կարող են արդարացնել ու սնուցանել օտար ժողովուրդների արհամարհանքը դէպի հայ անունն ու դատը: ...**Չգիտե՞ք, որ**... կարող են ինքնանուաստացումի մղել... հայութիւնը, ...**ինչո՞ւ եք ուզում խախտել հայութեան հաւատքը դէպի իր ապագան**: **Տմարդութիւն չէ՞ փողոցի լեզուով խօսիլ**... մի բուռ ժողովուրդի մասին: **Ինչո՞ւ էք ուզում փութացնել նրա յոյսերի մահը**... **Ի՞նչ, դրանո՞ւմ է գրչի մարդու կոչումը**: **Տաղանդը** տրւում է նրանով **կուրտիզանութի՞ւն անելու, զայն** հարստութեան ու **հանգստի վերածելո՞ւ համար**: ...Միայն նա՛ է ճշմարտօրէն մեծը, որը մեծ զաւակ է նա՛խ իր ժողովրդի, եւ ապա՝ մարդկութեան: **Իսկ դո՞ւք. ինչի՞ կը ծառայեցնէք ձեզ տրուած տաղանդը**: ...**Ինչպէ՞ս թիկունք ցոյց տուիք ձեր ցեղի գողգոթային:**

Ինչո՞ւ չուզեցիք, հրեայ օտարալեզու գրողների պէս, **լինել նա՛խ ձեր ցեղի տաղանդաւոր զաւակը**: **Դժո՞ւար է: Ծա՞նր է հայ խօսքի խաչը: ...Բայց չէ՞ որ** հէնց այդ **ծանր խաչը** սիրով **կրելու մէջ** է ճշմարիտ **մեծութիւնը**: Սակայն, **ինչո՞ւ կ՚երկարեմ**, **...Չէ՞ որ դուք սկսել էք ամաչել ձեր ծագումից**: **Այո՞:** Ուրեմն, գրչի **կոկետութիւն չէ՞ ձեր չանգռածը Հայաստանի մասին**» (Հ, էջ 471-473):

Այլ են զայրոյթի շարժառիթները Լեռնահայաստանի արեւմտեան ճակատի հրամանատար Կուռոյի հետ կապուած, եւ այլ՝ հարցերի նպատակը: Կուռոն 400 կարմիր գերիների, իրենց զենքով, թոյլ է տալիս սիւնեցիների հետ կռուել նախկին իւրայինների դէմ: Սկսւում է կործանարար ներքին քարոզչութիւն: Հայաստանի Հանրապետութեան նախարարական խորհրդին ուղարկած բացատրագրերում իրար յաջորդող հարցերով ցոյց են տրւում կատարուածի անխոհեմութիւնը եւ ակնկալուող յետեւանքները. «**Ո՞վ եւ ո՞րտեղ է տեսնուած**, որ քաղաքացիական կռուի ժամանակ թշնամուց **գերի վերցրած զօրամասերն** օգտագործելու նպատակով իսկոյն եւեթ **մտցնէ** առանց այն էլ **հոգով վարակած իր զօրաշարքերի մէջ**: **Մի՞թէ** այդ ճակատում մենք այնքան քիչ զինուոր ունէինք... **Մի՞թէ այդ անհեռատես... քայլը չէ՞, որ պատճառ դարձաւ** Լեռնահայաստանի համար **անելանելի վիճակ ստեղծելուն**»[6]: Իսկ Հայաստանի պառլամենտի անդամներին 1920 թ. հոկտեմբերի 23-ին հասցեագրուած դիմումն ուղղակի բողոքի ճիչ է՝ խառն տարակուսանքի հետ: Յաջորդաբար տրուող հռետորական հարցերը ներկայացնում են, թէ ինչ ծանրածանր իրաւիճակում է շարունակում կռուել Նժդեհը. «**Այլեւս ինչո՞ւ եմ կռւում**, երբ ստիւած պիտի լինեմ վերցրածս գերիներին բաց թողնելու: Այդպիսի **գերողբերգական դրութեան մէջ կարելի՞ է դնել մի ղեկաւարի**, ... որը արիւն է թքում... **Մինչեւ ե՞րբ**, ընկերնե՛ր, **մինչեւ ե՞րբ ես յաղթեմ, բայց** եւ այնպէս **ինձ պարտուած զգամ**: **Մինչեւ ե՞րբ** ռազմամթերք... աղաղակեմ, եւ Երեւանի սպանիչ լռութիւնը լինի ինձ պատասխան: **Մինչեւ ե՞րբ**...»:[7]

Ե. Նախատինք: Յաճախակի հանդիպող տրամադրութիւններից է: Հարցերն ի ցոյց են հանում իրականութեան կողմեր, որոնք չպէտք է լինէին, յատկութիւններ, որոնք իրենց գործունեութեամբ հասարակութեանը յայտնի մարդիկ չպէտք է ունենային, վարք, որ դատապարտելի է, բայց առկայ է: Նժդեհը նախատինքով դիմում է այն հայերին, որոնք ազատ երկրներում շարունակում են թրքախօս մնալ՝ հարցնելով. «**Օտա՞րն է մեղաւոր**» (Հ, էջ 445): Հարցի պատասխանն ակնհայտ է՝ իհարկէ, ո՛չ: Երախտամոռ մարդիկ յաճախ են եղել հեղինակի շրջապատում: Դրանցից մէկին՝ Գեղեոն Տէր-Մինասեանին, որի կեանքը փրկել էր, «Իմ պատասխանը» յուշագրութեան մէջ դառնութեամբ

6 ՀՅԴ ԿԱ, Դատական գործ 9698, թթ. 109-162:
7 ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1. գ. 73, թ. 1:

ու հանդիմանանքով հարցնում է. «**Մոռացա՞ր,** որ անարժէք կաշիդ փրկելու համար... անցար Պարսկաստան» (Հ, էջ 284):

Ծանր նախատինքի եօթ հարց է հնչում յաջորդաբար «Էջեր Լեռնահայաստանի գոյամարտի» յուշագրութեան մէջ՝ ուղղուած «ապերախտ ժողովուրդ»-ին: Մի շարք գիւղեր ու Ղափանն ամօթալի կերպով յանձնուել են թշնամուն: Գոյամարտող զօրամասերը քաշուել են Խուստուփ լեռը: Ադրբեջանը երեք մլն. է խոստացել Նժդեհի գլխի համար, եւ լրտեսները փնտրում են նրան: 1920 թ. սեպտեմբերի 17-ի կոչում իւրաքանչիւր հարց տրւում է՝ արթնացնելու բնակչութեան մշուշուած հիշողութիւնը, իւրաքանչիւր հարց մի խղճի խայթոց է. «... դու կանչեցիր ինձ եւ ես հասա... ասա՛, ժողովուրդ, այն օրէն քո երկրում **մնա՞ց** մի բարձունք, մի քար, որի վրայ դրած չլինէի իմ հոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ **տեսե՞լ ես** մի օր, մի ժամ անհոգս... դու ինձ **տեսե՞լ ես** փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու **լսո՞ւմ ես**, քարերը, քարերը կաղաղակէն, կասէն՝ ո՛չ: Ասա՛, **մնա՞ց մի բան**, որ խնայէի, չզոհաբերէի քո ազատութեան... համար: ...**Ի՞նչ, մոռացա՞ր** իշխան Ղաջարին, որի զօրքերին պատերի տակից եմ քշել: Վա՛յ քեզ, ժողովո՛ւրդ, **ի՞նչ պատասխան պիտի տաս Աստծուդ**, խղճիդ, պատմութեանը»[8]:

զ. Անորոշութիւն: Թերեւս երբեք այնքան հարցականներ չեն ծագում, որքան անորոշութեան մէջ լինելիս: Պահանջ է առաջանում պարզելու, թէ *ինչո՞ւ է* կատարել փաստը, *ե՞րբ, ո՞վ է մեղաւոր, ի՞նչ հետեւանքներ են լինելու*, վերջապէս, թէ *ի՞նչ պէտք է անել*: Մի այսպիսի իրավիճակ է պատմում «Ազատ Սիւնիք» յուշագրութեան մէջ: Ախտայի զօրամասը նահանջել է՝ առանց այդ մասին նախապէս տեղեկացնելու միւս զօրամասերին: Ճակատում շփոթ է: Հարցերով ներկայացւում է դրութեան անորոշութիւնը. «... այժմ Նոր Բայազետի հրամանատարութիւնը չգիտէր՝ **ե՞րբ եւ ինչո՞ւ է նահանջել** Ախտայի զօրամասը՝ թշնամու **ճնշմա՞ն տակ, թէ՞ տակտիկական նկատառումներով** է յետ քաշել, **ո՞ւր է կանգ առնելու**՝ դիմադրութիւն ցոյց տալու համար: **Ի՞նչ անել**» (ԱՍ):

1920 թ. օգոստոսի 10-ին Նժդեհը ստանում է զինուորական նախարարի յանկարծական, պարզաբանումներ չպարունակող գրութիւնը, որով հանձնարարւում է, համաձայն կնքուած զինադադարի, թողնել Զանգեզուրը եւ անցնել *մեր տարածք*: Դրութիւնն աւելի քան տարակուսելի է: Այդ կերպ ոչ միայն Զանգեզուրն էր յանձնւում կարմիրներին, այլեւ՝ Արարատեան Հայաստանը: Յետեւում է Նժդեհի գրութիւնը զինուորական նախարարին եւ գեներալ Նազարբեկովին՝ մէջբերուած «Հայ-բոլշեւիկեան կռիւները» յուշագրութեան մէջ:

8 **Գ. Նժդեհ,** *Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից*, «Հայրենիք» ամսագիր, թիւ 2, Սոֆիա, 1923 թ.:

Հարցերն ուշադրութիւն են հրաւիրում, թէ *ինչպէ՞ս կարելի է գործել* մի այսպիսի անորոշ իրավիճակում, երբ՝ «Ես չգիտեմ, թէ՝ 1. **Ի՞նչ պայմաններով, ո՞ւմ հետ** (**Ադրբէյջանի՞, թէ՞ սովետական Ռուսաստանի**) եւ **որքա՞ն ժամանակով** է կնքւած զինադադարը, 2.... Եթէ իմ ոյժերը պէտք է թողնեն իրենց երկիրը... ապա բոլշեւիկները եւ ադրբէյջանական **բանդաները ե՞րբ եւ ո՞ւր են քաշւելու**: 3. **Ի՞նչ է լինելու Գողթանի դրութիւնը**... 4. **Չե՞ք կասկածում**, որ թշնամին կարող է... տէր դառնալ Կապարգողթի ապստամբ շրջաններին: 5. ...**Չե՞ք ենթադրում,** որ այդ ոյժերը հեշտութեամբ կարող են տէր դառնալ Երեւանին: **Սա ի՞նչ զինադադար է**, որի ժամանակ բոլշեւիկները շարունակում են իրենց շահատակութիւնները...»[9]:

Է. Խոհականութիւն: Մէկ այլ կարգի հարցախմբեր էլ մղում են ընթերցողին՝ խորհելու, վերլուծելու իրականութիւնը: Իսկ իրականութիւնը բազմակողմանի է, վերլուծութիւնն էլ՝ տարբեր ուղղուածութեան՝ քաղաքական, հայրենապաշտական, անհատական-ներհայեցողական, հոգեբանական, մարդկութեան ապագայի հետ կապուած... 1920-1940 թթ. տասնամեակներում տարապատկեր ու հակասական էր հայ հասարակական կեանքը: Արեւմտահայութիւնը, հնարաւորինս խուսափելով թուրքական ջարդարար քաղաքականութիւնից, ցրուել էր աշխարհով մէկ ու ստուարացրել գաղութները՝ իր հետ տանելով ընկճուածութիւն, յուսալքութիւն. Արեւելեան Հայաստանը խորհրդայնացուել էր, ապրում էր մի դեռեւս չտեսնուած իրաւակարգում՝ հակաազգայնական կողմնորոշումով ու բռնաճնշումներով, սակայն արտաքին վտանգից ապահով: Քաղաքական որոշ ոյժեր հայութեան մէջ քարոզում էին հակաազգայնականութիւն, պարտուողականութիւն, ընդհուպ մինչեւ թրքասիրութիւն: Այլ ոյժեր՝ հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն, գոտեպնդում ու հոգեբանական յարութիւն էին ներշնչում ժողովրդին: Մարդկութիւնը քաղաքական ցնցումներ էր ապրում: Զգացւում էր պատերազմի մօտալուտ լինելը: Այսպիսի տարիների է Նժդեհը հանդես եկել իր հասարակական-քաղաքական վերլուծական աշխատութիւններով ու հրապարակախօսական յօդուածներով: Նա տագնապում էր սեփական ժողովրդի համար, հեռւում մնացած հայրենիքի համար, հայրենամոռացութեան պատճառով: Իր հռետորական հարցերը նախ այս ամենի շուրջն էին ու մղում էին ընթերցողին հեղինակի հետ մեկտեղ մտածելու. «**Ո՞վ է ստիպում մեզ**՝ չլինել հայրենապաշտ: **Ո՞վ կարող է խլել** մեզնից անկախ հայրենիքի սրբազան գաղափարը: **Ո՞վ կարող է** ինքնանուաստացումի **զոհ դարձնել** մեզ... **Ո՞վ եւ ի՞նչը**, վերջապէս, կարող է **արգելել** բոլորին եւ ամէն մէկին՝ իրենց կեանքի գերագոյն հարցը դարձնելու... թէ «**Ի՞նչ ձեւով կարող եմ** էլ աւելի օգտակար լինել Հայրենիքիս»: **Կա՛յ,**

9 «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր-նոյեմբեր, 1923 թ.:

մեզնից դուրս **գոյութիւն ունի՞ այդ** սեւ **ոյժը**...-չկա՛յ մեզնից դուրս, կա՛յ մեր հոգու մէջ» (Հ, էջ 445-446):

Ուծացումը գաղութներում, ռուսացումը հայրենիքում, հայութեան հատուածականութիւնն ու անմիաբանութիւնը, պետութիւնների բախման ահագնացող վտանգը, (եւ այս ամէնը այնպիսի պատմական պայմաններում, երբ ժողովուրդները ձգտում են ինքնավերանորոգման, համախմբման՝ պահանջելու իրենցից խլած իրաւունքները), Նժդեհին ներշնչում են խօսելու հայ հասարակութեան հետ՝ նրան մղելով կշռադատման ու վերլուծութեան: Ահա ինչպիսին է «Ցեղի յաւիտենական զէնքը» յօդուածի բնաբանը. «Ես հարցնում եմ այնպէս, ինչպէս ո՛չ ոք դեռ չէ հարցրել - **ո՞ւր ենք գնում**: **Մեզ համար տեղ կա՞յ պատմութեան մէջ: Գիտէ՞ մէկը, որ բոլորովին մենակ ենք մնացել,** որ ներկայ չունենք: **Գիտէ՞ մէկը,** որ եթէ դադարենք գոյութիւն ունենալէ՝ տիեզերաշէնքի մէջ մի հատիկ հիւլէ իսկ պիտի չշարժի» [Հ, էջ 525]: Այսպիսի հարցախմբերից հետո վերլուծութիւնն ընթանում է տարօնականութեան, ցեղի, ոգու շուրջ:

Եղեռնից մազապուրծ հին սերունդը հոգեկան ընկճախտի մէջ է, անընդունակ նոր շարժի, գործունեութեան, այլ է նոր աճող սերունդը, որն ի վիճակի է եւ պէտք է պայքարի անցեալ դարձող հոգեվիճակի ու գաղափարախօսութեան դէմ: «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան մէջ հէնց այս առումով հնչում են հռետորական հարցեր, որոնք հաւաստում են երիտասարդութեան կարողութիւնները եւ հին սերնդին հակադիր ձգտումները, մղում դեպի մեծագործութիւններ. «**Ո՞վ չի զգացել** երբեմն իր մէջ կորովի յանկարծական ծովացում: **Ո՞վ չի ունեցել** երբեմն հանճարեղ ներշնչումներ, յայտնութիւն, պարզատեսութիւն: **Ո՞ւմ յաճախ չի թւացել**, որ ինքը որոշ արտասովոր վայրկեաններում ընդունակ է զարգացնելու իր մէջ շատ աւելի մեծ ոյժ, քան այն, որ զգում է իր մէջ սովորական վիճակում» (Հ, էջ 97): Այսպիսի խոհերի են տանում հարցերը սեփական ժողովրդի վերաբերեալ:

Գալով մարդկութեանը՝ նախորդ երկու ենթակէտում արդէն առիթներ եղել են հեղինակի հետ մէկտեղ խորհելու ընդհանուր խնդիրների շուրջ: Դա *Երջանկութեան խնդիրն էր*. «**Չե՞ս յիշում**, ընթերցո՛ղ, այն ծանօթ պատկերը, որ երջանկութիւնը կը խորհրդանշէ: Կախարդական զօրութեամբ օժտուած կանացի մի թեւաւոր էակ ... փախչում է՝ իրեն հետ վազեցնելով մարդկային ցեղը... **Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս: Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը**», - ցաւագին հարցնում է հեղինակը «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան մէջ, «Որովհետեւ միամիտ մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտռեց եւ կը փնտռէ երջանկութիւնը: Որովհետեւ նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը եւ իր կեանքը վերածեց դժոխքի» (Հ, էջ 92-93): Դա

համամարդկային համերաշխութիւնն է, որը ներկայ հակամարտութիւնների պայմաններում անիրականանալի է. «Արդեօք **այսօր հնարաւո՞ր է** աշխարհը լցնող «ազգ եւ ազինք»-ների համաշխարհային եղբայրութիւնը... Հնարաւո՞ր է դա... վաղը, մոտիկ ապագայում»,- անհանգիստ ու դարձեալ ցաւագին տրւում է հարցը,- «Ոչ, ի հարկէ» (Հ, էջ 455): Եւ ահա ամենամտահոգիչ, տագնապալից խնդիրը. *ո՞ւմ եւ ինչի՞ կծառայի ատոմային էներգիան.* «Ատո՛մ, դու անսիրտ աստուածութի՛ւն, **ո՞վ, ո՞վ է գործի դնելու քո տարերային ոյժը** - չարութեան ձեռք **պատերա՞զմը, թէ՞ խաղաղութիւնը**» (Հ, էջ 375):

Գարեգին Նժդեհի խոհական հարցերը, իրենց պատասխաններով հանդերձ, կարող են լինել կարճ, հատու, սեղմ եւ ընդգրկուն բովանդակութեամբ՝ հաւասարուելով ասոյթների: Երկու նմուշ, թերեւս. «**Ներե՞լ եք ուզում** - յաղթե՛ք նախ» (Հ, էջ 136): «**Փա՞ռք ես փնտրում**՝ վտա՛նգ փնտրիր» (Հ, էջ 392):

Այսպիսով՝ հարցերը, այդ թւում՝ հռետորական հարցերը, որպէս ճարտասանական միջոց, Գարեգին Նժդեհն առաւել յաճախ գործադրում է փնջերով: Դրանք կարող են ուղեկցուել պատասխաններով կամ իբրեւ պատասխան ակնկալուող այլ հարցով. արտայայտում են ամենատարբեր զգացմունքներ ու տրամադրութիւններ, ընդգծում, շեշտում նախադասութիւնների իմաստը, աւելացնում խօսքի յուզականութիւնը՝ ընթերցողին կենտրոնացնելով իր ասելիքի վրայ:

РЕЗЮМЕ

Выдающийся оратор Гарегин Нжде, используя риторический вопрос, концентрирует внимание читателя на сказанном, придавая тем самым особую экспрессию речи. При этом вопросы могут быть выражены одним словом, словосочетанием либо предложением.

Г. Нжде в своей речи нередко использует сгруппированные вопросы, число которых иногда достигает двадцати. В случае, когда вопросы имеют негативный характер, предполагается позитивный ответ, а ответы на вопросы позитивного характера предполагают ответ негативный. В определенных случаях Г. Нжде сам отвечает на собственные вопросы – лаконично, но в то же время весьма обстоятельно, иногда отвечая вопросом на вопрос.

Рассмотренные стилистические методы дают возможность передать те или иные оттенки настроения и душевного состояния: дилемму, обращение, негодование, порицание, неопределенность, рассудительность и т.д.

SUMMARY

Garegin Nzhdeh, an outstanding orator, used rhetorical questions to attract the reader's attention and to make his speech more expressive. He often formed his questions through single words, phrases or sentences.

In his speech, G. Nzhdeh often tends to use group questions, the number of which can sometimes reach twenty. Negative questions thus require a positive response, whereas positive ones imply a negative answer. In certain cases, G. Nzhdeh answers the questions he himself, providing laconic but at the same time in-depth answers. Frequent are the cases when he poses another question in response to the answer.

The aforementioned stylistic devices convey the mood of the author and his emotional state, highlight dilemmas, express his attitude, discontent, criticism, uncertainty, discretion, etc.